ԲԱՐԵԿԱՐԳՎՈՒՄ Է ՄԱՐՏԱԿԵՐՏԸ

Մարտակերտ, 6 դեկտեմբերի– Մարտակերտ շրջկենտրոնը մաքրելու ու բարեկարգելու նպատակով քաղխորհրդի նախաձեռնությամբ այստեղ դեկտեմբերի 4–ին կազմակերպվեց շաբաթօրյակ, որը հոկտեմբեր ամսից սկսած թվով երրորդն էր: «Փաստ»ի սեփական թղթակիցը Մարտակերտից հաղորդում է, որ շաբաթօրյակին մասնակցել է մոտ 800 մարդ: Առավել մաքրման կարիք է զգում քաղաքի կենտրոնական՝ Լենինի փողոցը, որի վրա գտնվող գրեթե բոլոր հասարակական շենքերը՝ կենցաղի տունը, սպորտկոմիտեն, «Ջրաբերդ» կինոթատրոնը, քաղաքային ռեստորանը, կենտրոնական հանրախանութն ու երեք այլ խանութներ, մասնակիորեն կամ լրիվ ավերված են: Ցավով պետք է նշել, որ հիշյալ շինություններից ոչ մեկում տրակավին վերականգնման աշխատանքները չեն իրականացվում:

ՓԱՍՏ